




## ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՎԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԾԵ 80ԻՆԻՍ

ԲԵՒԵՆՈՎԻՐ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՌՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Շար. տես էջ 193)

ԱՆՈՒՆՍ Argistihinili «բաղաբ Արգիշտի» ցուցանում է, թե նորան շինել է վանի թագաւոր Արգիշտին, որ թագաւորում էր Ը դարու կիսում նախ քան զԲրիտանոս: Սակայն նորա առաջին հիմնարկութիւնը հազիւ թէ Արգիշտիի գործն լինի: Սարգաւապատի արձանագրութեան մէջ, ուր Արգիշտի խօսում է այս բաղաբի շինութեան մասին, տաւնդում է կործանուած ասպարանքի նուրդման մասին, որ վկայում է՝ թէ քա-

ղաքն, իբրեւ թագաւորական արքայանիստ, գոյութիւն ունէր նորանից առաջ, բայց քաղաքաւած էր: Արգիշտին վերանորոգեց այն և կոչեց իւր անուամբ: Վանի առաջին թագաւորներից Խնացած արձանագրութիւններում մենք չենք գտնում յիշատակութիւն այս քաղաքի մասին: Արգիշտիի նախորդն, նորա հայր Մենուա, Արմաւուրում ոչ մի արձանագրութիւն չթողեց և նորա կալուածքներն, հաւանաբար, տարածւում էին միայն մինչեւ Երասխի աջ եզերքը՝ Երեւանի տափարակում: Ձախ ափը նա անցած չէր: Շատ հաւանական է՝ որ Արմաւիրը, իբր քաղաք և մայրաքաղաք, բնակութեան տեղի էր մի օր և իցէ տեւողական իշխանի, ոչ վանի հարստութիւնից, և նորա ճշգրիտ պատմութիւնը աւելի հին է Երասխի հովտում վանի թագաւորների ձեռքով կատարուած աշխարհակա-

լուսիններէրց: Ասորեստանի թագաւոր Սալ-մանասար երկրորդ\* արձանադրութիւններէց մենք գիտենք, որ Երասխի եզերքում կար Ուրարտեան մի հզօր պետութիւն որչազնա-կան թագաւոր Արամի կառավարութեան ներքոյ. այդ պետութեան քաղաքների թւում յիշում է *Aramali*, այսինքն բառ առ բառ «քաղաք Արամի»։ Կարելի է գուշակել թէ Արամայի այն ժամանակներում նախնա-կան և բուն անունն էր Արմաւրի, երբ հիւսիսը կամ Երասխի հովիտը առաջնական դեր էր կատարում Ուրարտուի պատմութեան մէջ, նախ քան նորա կենդրոնի տեղափոխուի զէպի հարաւ՝ Վան լճի ափերը։ Այդ սկզբնական անունը կարող էր պահպանուել Արգիշտիից յետոյ ևս և յարատեւել։

Նախ քան Արմաւրի բլրի նուաճումն Արգիշտիի ձեռքով, նորա հայր Մենուա արդէն տիրապետել էր Երասխի հովտին։ Դաշպու-ռունի արձանադրութիւններից մեզ յայտնի է, որ Մենուա հաստատեց իւր պետութիւնը Երասխի հովտում, նուաճելով երկիրն Էրի-դուահի և ամբացնելով այդ երկրի մայրա-քաղաքն, որ իւր անուամբ կոչեց Մենուա-հինիլի, այսինքն՝ քաղաք Մենուայի։ Բայց ոչ մի բանից չէ երևում, որ նորա տիրապետութիւնը անցած լինէր Երասխի միւս ափը։ Երասխի բոլոր հովտի նուաճումն կատարուեցաւ Մենուայի հռչակաւոր որդու Արգիշտիի ձեռքով, որ Վանի ամենաերեւելի թագաւորներից մէկն լինելով՝ արեւելքի և նուախի աշխարհակաշների շարքիցն էր։ Նորա տիրապետութեան տակն էին՝ Առաջաւոր Ասիա, Ասորեստանը, Ասորիքը, Թորք Ասիան. բաւական է յիշեն միայն, որ բուն Ասորեստանն անգամ, որ ունեցել էր այնպիսի միապետներ, որպիսին էին Տիգլատ-Պիլեսեր և ռալին և Ասսուր-Նասիր-աբալը, նա ամենայն իրաւամբ ենթակայ էր համարում Ուրարտուին։ Վանի քարաժայռի երեսին կայ նորա ընդարձակ մի արձանադրութիւնը, բաղկացած անլի քան 400 տողերից, որ աւան-

դում է նորա արշաւանքների մասին. իւր նշանակութեամբ դա կարող է համեմատուիլ միայն Դարեհ Վշտասպի Բեհիստունեան ար-ձանադրութեան հետ և կոմիող է Ուրարտեան ազգի գերազոյն իշխանութեան Ասիայում։ Արգիշտին, չնայելով իւր գերազանց և զարմա-նալի աշխարհակալական գործունէութեան իւր աշխարհի հարաւային կողմում, չէր մոռա-նում հիւսիսն էլ, և կատարում էր այնտեղ այնքան արշաւանք ու աշխարհակալութիւններ, թողեց մեզ այնքան յիշատակներ, որ, ըստ երեւութի, հիւսիսային երկիրների նուաճումն նորա աշխարհակալութիւնների գլխաւոր նպատակն էր։ Բայց նորա տիրապե-տութեան պիսաւոր կենդանւոր այս երկրում, ուստի նա սկսում էր իւր արշաւանքների գործողութիւնը զէպի և Երասխի հովիտը և շրջակայ վայրերը, Արմաւրն էր կամ *Argistihinili*. Այս կենդանի տեղադրումն *Menuahinili* (Menuahinili) քաղաքից Արարատի մօտ արմաւիրեան բլրի վերայ, հաւանաբար, կատարուեցաւ այն պատճառով որ Արմաւրի դիրքը, համեմատաբար, անլի կտրող է ուղղադիտական և կոչտու-րական կողմից և տեղն էլ գեղեցիկ է ու յարմար։ Տարաբալի միւլում լինելով, Արմաւրը յարմար ճանապարհներ ունէր ամենայն ուղղութեամբ զէպի և այն շրջապատող լեռնային գաւառները, որոնց պիտի տիրապետէին Վանի այս թագաւորը և նորա յաջորդները։ Չանգի, Քասաղ և Արփա-չայ գետերով, որոնք ջրմուկների ցանցով իրար ու Երասխի հետ կապուած միացած էին, կարելի էր մտնել անլի մարդաւոր և քաղաքական տեսակետից նշանաւոր վայրեր և օգտուիլ բնական ճանապարհներից, որոնք տանում էին Երասխի հովտից զէպի և Գեղարքունու, Բարձր Հայքի բարձունքը և լեռնային շղթաներով՝ փոքր Կովկասի վրայից՝ զէպի հովիտը։ Թէ մըրդի օգուտ քաղեցին որոսինից Արգիշտի և նորա յաջորդները, յետոյ կը տեսնենք. այժմ դանձանք Արմաւրի յիշատակներին, որ թողել են Արգիշտի և նորա յաջորդները։ Արմաւրի և նորա շրջակայքում գտնուած բնեւորներ արձանա-

\* Սալմանասար երկրորդ թագաւորից 860-836 նախ քան զՔրիստոս։

գրութիւնների քարերը ճարտարապետական ծագումն ունենալով, շինութիւնների մասն են կազմում, բայց ի Ղարազալայի մօտ գտնուած արձանագրութիւնից, որ փորագրուած էր ժայռի վրայ: Այսպիսի քարերը շատ գիւղին էր տանել մի տեղից միւս տեղ, և ինչպէս եւ բնուում է, գտնուած արձանագրութիւնների քարերի մեծագոյն մասն ծառայում էր իբրեւ շինութեան նիւթ: Դորա քառանկիւնի սալեր են, մի քանիսը ունին ճիշդ խորանարդի ձև մի կանգնաչափ կողքերով. բայց մեծագոյն մասն երկարածիգ են մի կանգուն լայնութեամբ և բարձրութեամբ և երկու կանգուն երկարութեամբ: Բլրի վրայ և նորա մօտակայքերը, այժմ սակաւ են այդպիսի քարերը. բայց նոցա ահագին քանակութեան մասին կարելի է գուշակել այն հանգամանքից, որ Արմաւիրն մօտ, ինչպէս օրինակի համար, Թափա—Տիպի, Գուրտուղույի, Մօլլա—Պայէղիտ, Սարգարապատ գիւղերում և այլուր, մենք ամենայն ջաշլում հանդիպում էինք այդ քարերին, որոնք մի տեղում հօղային պատերի հիմն են կազմում, մի ուրիշ տեղ գոնեների մօտ՝ նստարանների տեղ են ծառայում կամ պատերին են կպցրած իբրեւ զարդ: Սարգարապատում, ուր պարսկական տիրապետութեան միջոցին բնակւում էր Երեւանի սարգարը, ամրոցի զոնների պարիսպները կազմուած են, արտաքուստ, արմաւիրեան սալերից: Մի՞նչև անգամ վաղարշապատում, որ համեմատաբար հեռու է բլրից, մենք տեսանք, անկասկած, Արմաւրից բերուած քարեր, որով սալաշատակուած են գիւղի ագուղայքը և կամուրջները: Ս. Էմիածնի գաւառապետ երկարակեց Ե. Խանաղովը վկայեց, թէ մեծ քանակութեամբ շինութեան համար նիւթեր են յափշտակւում Արմաւրի բլրից, թէ և տեղական վարչութիւնը խստիւ արգելում է այդ բանը:

Այդպիսի պայմաններում դժուար էր սպասել, որ Արմաւրի բլրի վրայ արձանագրութեան քարեր մնային, եթէ դորա գետնի վրայ էին ընկած, և ոչ թէ հողի տակը թաղած: Այդ էր պատճառը, որ քարերը գտնուում էին ոչ թէ բուն բլրի վրայ յատկապէս,

այլ նորա շրջակայքում: Հարեան գիւղերի բնակիչները, ակներև է, որ երկար ժամանակ իւրեանց մօտ պահելով այն քարերը, ոչինչ նշանակութիւն չէին տալիս նոցա, մինչև որ Մեսրոփ արքեպիսկոպոսը և զպիւր Գալուստ Տէր—Մկրտչեանցը գիմեցին նոցա հարցաւորածնով այդ մասին և սկսեցին կամած կամաց հաւաքել այդ քարերը և բերել ս. Էմիածնի. Թէ էրբ, ուր և քիչ եւ զանակով զորա երեւան եկան, այժմ հնար չկայ մի առ մի ստուգելու և զորա մէջ կարեւորութիւն էլ չենք տեսնում: Սակայն այսօր քանո ստոյգ է, որ բոլոր արձանագրութեան քարերը, որոնք գտնուած են Արմաւրի մօտ գիւղերում, Եղրապի հովտում գետի այս ու այն ափերում, եթէ մի և նոյն նիւթից են և միատեսակ տաշուած միւս քարերի նման, որ բլրի վրայ են, անկասկած է, որ զորա պատկանում էին բլրի վրայ և մօտակայ գիւղերում եղած շինութիւններին, և միայն յետոյ փոխադրուեցան ուրիշ տեղեր: Արդեօք բլրից հեռւ թէ նորա մօտակայքում են գտել քարերը Սմբատեանց արքեպիսկոպոսը և Գալուստ Տէր—Մկրտչեանց, զա երկուրդական խնդրի է:

Այդ խորհրդածութեան վրայ յենւով, մենք իրաւունք ունինք արմաւիրեան համարել ոչ միայն այն ինը քարերը, որ, Մեսրոփ սրբազանի վկայութեամբ, գտնուեցան բլրի վրայ և նորա մօտիկ Թափ—Տիպի, Գուրտուղույի և Մօլլա—Պայէղիտ գիւղերում (ս. բունք են N<sup>0</sup> N<sup>0</sup>. X—XIV, XVII, XIX—XXI իմ հրատարակութեամբ), այլ և երեք ուրիշները, որ գտնուած են աւելի հեռու տարածութեան վրայ Արմաւրից, ինչպիսին է՝ Ղազանչու IV և Սարգարապատի IX արձանագրութիւնը. Իսկ ինչ որ վերաբերւում է Ղարազալայում գտնուած արձանագրութեան XXIV, պէտք է նկատել, որ նորա բովանդակութիւնը աներկբայելի յարաբերութիւն ունի Արմաւրի հետ, ուստի այն էլ հարկաւոր է գննել արմաւիրեանների հետ: Այսպէս, ուրեմն, Արմաւրին վերաբերեալ արձանագրութիւններն 12 են. զոցանից 11 հատը ս. Էմիածնի (Գեորգեան) ձեռնարանի թանգարանումն են, մէկն (Ղազանչու) Սուրբ.

մալու գաւառապետ Բօգոլալուօկու\* մօտ է. իսկ Ղարազալայինը իւր տեղումն է:

Այս թուից եօթն քարեր պատկանում են Արգիշտի առաջինին [IV, IX — XI, XVII, XXI (— XXIV)], չորսը նորա յաջորդ Սարգուրի երկրորդին [XII — XIV, XX], մէկն Ռուսա երկրորդին [XIX], որ թագաւորաց հարիւր տարուց յետոյ է դարու կիսում նախ քան զԲրիտասու: Այս փաստերից հետեւում է, որ Արմաւրի կամ Argistihinili-ի բարգաւաճումն տեղի է ունեցած Ը դարու կիսում նախ քան զԲրիտասու. ըստ որում այս ժամանակաշրջանից մենք ունինք տասնեւմէկ արձանագրութիւն: Սարգուրի երկրորդի և Ռուսա երկրորդի միջանկեւղ ժամանակաւ միջոցի մասին մենք տեղեկութիւն չունինք առ ի չգոյնէ յիշատակարանների:

Արմաւրի բոլոր արձանագրութիւնները ուշի մօտը ուսումնասիրելիս, մեզ զարմացնում է այն իրողութիւնը, որ նոցանից և ոչ մէկի մէջ չէ խօսուում Արմաւրի-Argistihinili-ի, իբրեւ քաղաքի մասին, որպէս և այն երկրի, որի սահմաններում գտնուում էր այն քաղաքը: Նոքա աւանդում են լոկ տների շինութեան կամ նորոգութեան մասին, ջրբանաւորների կառուցման և կրօնական ծիսակատարութեան մասին. ոչ մէկում չէ խօսուում արշաւանքների կամ երկրի նուաճման մասին: Իսկ մի թիւրիմացութիւն չէ: Շատ հաւանական է, որ ռազմագիտական և քաղաքական տեսակէտից այս տեղն, Արգիշտիի տիրապետութեան ժամանակ, մեծ նշանակութիւն չունէր, և նորա ձեռքն հասած առանց պատերազմի. բայց զորա փոխարէն նա կրօնական մեծ նշանակութիւն ունէր: Մի արձանագրութեան մէջ, այն է՝ XVII, տող 10, Արմաւրը կոչւում է *Haldina* այսինքն, քաղաք խալդի շաստուածի. մի ուրիշ արձ. XII, տ. 5 — *Haldinili*, այս.

ինքն, տեղի բնակութեան խալդի շաստուածի. նոյն XVII արձանագրութեան մէջ խօսուում է կենդանեաց զոհաբերութեան մասին. իսկ X, XI, և XIIII արձանագրութիւնների մէջ կրօնական հանդէսների մասին: Խալդի շաստուածն պաշտօնից գատ, որ Ուրարտեան ազգութեան գլխաւոր շաստուածութիւնն էր, այստեղ պաշտում էին նաև արեգական շաստուած Արդինին (*Arđini*), ինչպէս կարելի է տեսնել XIII արձանագրութեան 9 տողից: Շատ հաւանական է կարծել, որ Ուրարտուի պատմութեան մէջ Արմաւրը կրօնական նշանակութիւն ունէր դեռ եւս վանեան շրջանից առաջ և նորա ազդեցութիւնը այս տեսակէտից վան քաղաքից պակաս չէր: Երբ քաղաքական կենդանութեան տեղափոխուեցաւ հարաւ, Ուրարտեան թագաւորութեան հիւսիսային երկիրները այնքան հեռացան նորանից, որ վանի թագաւորները հարկաւորուեցան զինու զօրութեամբ նուաճել նոցա. այդ միջոցին Արմաւրում շաստուածոց պաշտամունքը ընկած զրուցեան մէջ էր, մեհանները հնացած էին, զոհաբերութիւնները դադարած: Տիրապետելով Երասիի ձախ ափերին Երեւանի տափաւրում, Արգիշտի վերականգնեց այս տեղի առաջին կրօնական նշանակութիւնը և ընդ սմին սոյն տեղն աւելի յարմար գտաւ նաեւ քաղաքական կողմից, քան Լուծիռնէին, որ շինել էր նորա հայր Մենուան և իւր քցայանիստ փոխադրեց այս կողմերն:

Այլ՝ հետեւում են բեւեռագրերի բնագրեր, վերձանութիւնը, թարգմանութիւնը ու մեկնութիւնը, որ աւելորդ ենք համարում մէջ բերելու, շատանալով միայն նոցա կարճ բովանդակութեամբ: ՄԻ՞նչ արձանագրութեան մէջ աւանդում է, թէ Արգիշտի, Մենուայի որդին, խալդիացոց բաժին է հանել երկիրն իւրու, նշանակել է քսան քուրմ զոհաբերութեան համար Շիւլուինի ազգի միջին և այլն. XI՞՞՞նչ շարունակութիւն է նախընթաց արձանագրութեան, և նորա մէջ՝ ի միջի այլոց, յիշում է Ազանի երկրի մասին, որ հաւանական է, առում է Պ. Նիկոլսիի, զըս. նրում էր Արմաւրը: Նոյն Ազանին յիշում է նոյնպէս վանի քաղաքային արձա.

\* Պ. Գաւառապետը Ղազանչու արձանագրութիւնը ուղարկել է ու. էլմիստին, ինչպէս վեհափառ կաթողիկոսն Ամենայն Հայոց Մկրտիչ Ա. Նորբեումս բարեհաճել էր հաղորդելու Մոսկվայի կայսերական Հնագիտական ընկերութեան: Ծան. Թարգ:

նագրութեան մէջն: XVIII<sup>րդ</sup> արձանագրութիւնը տաւորում է, թէ խալդի շատուածին զոհուած են մի ցուլ, գոմէշ, ոչխար, գառն, կանգնած է սեղան ողջակիզի. վերանորոգուած է դամբարան, և այլն:

Սարգաթապատի նշանաւոր արձանագրութիւնը գտնուած է ձիթահանքի մէջ և շատ լաւ պահպանուել է, որով հնարաւորութիւն է տալիս գիտնականներին վերծանելու այն բառ առ բառ. ահա նորա թարգմանութիւնը. «խալդիացւոց մեծաց Արդիշտի, որդի Մեհնուայի ասում է. պալատը կործանուած եւ վերանորոգեցի, զարդարեցի, Արդիշտիհնիլի կոչուեցաւ նա (պալատը). ամուր պատերն (ափի), իւրաքանչիւրն վայրի բարի շերտով գետն Մոնանի . . . կանգնեցի, փայտեայ շինուածներ (?) կերտեցի, կատարեցի այս ձեռնարկութիւնը (ի պատիւ) Արդիշտի, որով Մեհնուայի, արքային հօգորի, արքային մեծի, արքային երրորդ Բիայնայի, որ բնակւում է Տուշպա քաղաքում»:

Այս արձանագրութիւնը իւր բովանդակութեամբ մի վկայութիւն է Արմաւիր շինութեան Արդիշտի առաջին ձեռքով, ասում է ոռոս գիտնականը. Անուն Argistihinili, որ մենք հանդիպում ենք միայն Արդիշտիի տարեգրութեանց մէջ, փորագրուած է այստեղ բուն շինութեան տեղում իւր բոլոր պարագաներով: Արդիշտին բլրի վրայ գտաւ կործանուած պալատ, վերականգնեց այն և կոչեց Argistihinili. Դա ոչ թէ միայն, յատկապէս պալատի — շէնքի անունն էր, այլ ամբողջ քաղաքի, ամբողջ գաւառի և նշանակում էր Արդիշտիի մայրաքաղաք: Այն իսկ ժամանակ, որի մասին խօսում ենք, վանի արքայն, ուր և բնակէր, միշտ իւր զօրքի բանակի մէջն էր, և նորա փոքր ի շատէ յարատեւ բնակութեան տեղին պիտի լինէր ամրացրած բանակ, բերդ: Այսպէս և ոչ այլապէս պէտք է ենթադրել Արդիշտի թագաւորի հիմնած Argistihinili-ն. Բոլոր այդ շինութիւնները շէնքի կարող տեղաւորուել մի միայն արմաւիրեան բլրի վրայ, որ այնքան էլ մեծ չէ. հաւանաբար, բանակը բլրի ստորոտումն էր, շրջապատած պատով կամ մեծ պատուարով, որի պատերը ժամանա-

կով կարող էին քայքայուել և իսպառ անհետանալ: Հետեւեալ XXI<sup>րդ</sup> արձանագրութիւնը գտնուեցաւ 1895 թ. Երասխի ձախ ափում՝ Ղարաբալայի Խաւրակներից ոչ հեռու, որ գետի միւս ափումն է, քսան վերստ հեռաւորութեան վրայ Արմաւիրց: Արձանագրութեան էստամպաժը հանել է Մեարովը վարդապետ Տէր-Մովսիսեանը, որի վկայութեամբ այդ տեղը արժանի է խորին ուշադրութեան: Այստեղ Երասխը զուրս է զընում նեղ ձորից Երեւանի տափարակը մշտնելու, և տեղն՝ ուր գտնւում է արձանագրութիւնը, անկիւն է՝ կազմուած Երասխից և նախկին ցամաքած լրմուղից: Բուն արձանագրութիւնը փորագրուած է մի ահագին բարի վրայ, որ ծածկուած է մի այլ քարով: Մեարովը վարդապետի կարծեքով, արձանագրութեան քարն նորան կից ժայռի մի մասն է եղել, որ յետոյ հրադիւային յեղափոխութեան շնորհիւ գատուել է նորանից: Բայց ես բոլոր փաստերը ունիմ ապացուցանելու, թէ այդ յեղափոխութիւնը կատարուած է նախ քան արձանագրութեան փորագրութիւնն, թէ Արդիշտի թագաւորը գտել է քարը նորա ներկայ գրութեան մէջ: Նոյն իրողութիւնը կարելի է ստուգել Ղուլիմանում, Զախալու և մանաւանդ Էլյառ գիւղում: Արձանագրութեան բովանդակութիւնից երեւում է, որ Արդիշտի այդ տեղում կառուցել է մի շէնութիւն, որ և կոչել է Pili: Այս բառը, որ Մէյր մեկնում է իւր յիշատակարան (տե՛ս The Cuneiform Inscriptions of Van), իսկ Դ. Միլլեր իւր արձանագրութիւն\* վերջին ժամանակներս, շնորհիւ վաղիմար Բիլկի կատարած հետազոտութեանց և գիտերին վանի շրջակայքում (Ueber neuerlich aufgefunden Keilschriften in russisch und türkisch Armenien. Zeitschrift für Ethnologie Bd. XXIV. Heft II (1882), նոր մեկնութիւն ստացաւ:

\* Die Keilschrift von Aschurat-Darga S. 18-19. — Տե՛ս նաև Լ. Մսերեանցի յօդուածն՝ Къ интерпретации ванских надписей — Հնագիտական ընկերութեան արեւելեան յանձնարմբի գործերում. Հտ. Բ. մասն Ա:

Յայտնուեցաւ այն իրողութիւնը, թէ Շամիրամ—սու (Արտամաշտի և Վանի միջում) մեծ ջրմուղի մօտակայքում եղած արձանագրութիւնները աւանդում են, թէ Մենուա թագաւորը կառուցած է ջրվիճի Գա ստիթ տուաւ պ. Բելիկն և պրօֆ. Լեմանին պիղեիւ, թէ ջրվիճի բառն հասկանալու է իբրեւ ջրմուղ. Պրօֆ. Սէյսը հաւան չէ այս կարծեաց. նոյնը մենք եւս կ'ստենք: Ներկայումս Ղարազարայում գտնուած արձանագրութեան վրայ յենով, Վ. Բելիկը հաստատում է իւր կարծիքը: Արմաւիր արուարձաններում գտնուած արձանագրութիւններից դա միակն է, որ, փութագրուած լինելով ժայռի վրայ, աւանդում է ջրվիճի կառուցման մասին և կանգնած է այն իսկ տեղում, ուստի սկսվում էր ջրմուղին հիանելով Երասխից դէպ ի հիսիս՝ ուսողելու համար Արմաւիր մօտակայ վայրերը: Ուրեմն կասկած չկայ, որ ջրվիճի նշանակում է ջրմուղ: Ահա յիշեալ ՏՏԻՎ արձանագրութեան թարգմանութիւնը.

«Խալդիացւոց մեծաց Արգիշտի, որդի Մե. նուայի, այս ջրմուղը շինեց, պատերը (եղբրի) բարձր իւրաքանչիւրն շերտով հողի կուտակած ազատ (?) Խալդիացւոց Արգիշտի ամրացրեց (ի պատիւ) Արգիշտիի, որդւ Մենուայի, արքային հզօրի, արքային երկրի Բիւայնայի, որ բնակուում է Տուշպա քաղաքում»:

Արմաւիրեան արձանագրութեանց շարքին վերադառում ենք նաև մի սողանի Վ արձանագրութիւնը, որ արքայ. Մեսրոպը գտել է 1886 թ. Սուրմալու գետաօր Ղաւանիի գիւղում, Երասխի աջ ափերում, Արմաւրից տասնեւհինգ վերստ հաստարութեան վրայ: Գալուստ Տէր—Միկայէանը բնագործնակելով այն, ուղարկեց բնկերութեանս, քանի մի կարևոր տեղեկութիւններով հանդերձ:

Ահա գորա թարգմանութիւնը.

«Խալդիացւոց մեծաց, Արգիշտի, որդի Մե. նուայի այս տունը շինեց»:

XII<sup>րդ</sup> արձանագրութիւնը գտնուում է ս. Էլմիսմանի թանգարանում, և պատկանում է ոչ թէ Արգիշտիին, այլ սորա յաջորդ Սարգուրի երկրորդին: Այս թագաւորը ոչ միայն

չհեռացաւ Արգիշտիի հիւնքից, որ նորա պետութեան կենդրոնն էր և արքայանիւստը, այլ աշխատեցաւ առաւել ևս զարդարել ու ճոխացնել նորանոր շինութիւններով: Սոյն XI արձանագրութեան մէջ Սարգուրի հանդիսաւոր կերպով աւետում է ի պատիւ Խալդի շաստուածի կառուցած մեհենի մասին. այս տեղ Խալդին՝ նա կոչում է տէր աշխարհի: «Խալդիի, տիրոջ աշխարհի, այս տունը Սարգուրի, որդի Արգիշտիի, վերականգնեց (ուրեմն մեհենը առաջ կար, բայց կործանուած էր) այս Խալդիին իւր կործանուած տեղն դռների վերանորոգեց, ձօնեց ի պատիւ Խալդիու, տիրոջ աշխարհի, Սարգուրի Խալդիացւոց մեծաց, արքայի հզօրի, արքայի մեծի, արքայի աշխարհների, արքայի երկրին Բիւայնայի, արքայից արքայի, որ բնակում է Տուշպա քաղաքում»:

XIII և XIV արձանագրութիւններն, որ ս. Էլմիսմանի թանգարանում են, մէկը միւսի շարունակութիւն են կազմում և տեղ տեղ ամբողջ բառեր եղծուած են կամ անհասկանալի:

XIII<sup>րդ</sup> արձանագրութիւն.

«... զոհ Սարգուրի, որդի Արգիշտիի... սապարներ... Խալդի մեծին, Խալդի հզօրին, ողորմածին... երջանիկ օրեր... ջրմուղ ամուր... Սարգուրի 20 տւինու (յայտնի չէ ի՞նչ) առաջի շաստուածին աքեզական բերեց բնորեւագոյն աշխարհների Խալդիացւոց մեծաց Սարգուրի, որդի Արգիշտիի»:

XIV<sup>րդ</sup> արձանագրութիւն.

«Բաղաք փայտեայ շինութիւններ այս ձեռնարկութիւնը... զոհ Խալդիին... Սարգուրի, որդի Արգիշտիի... սապարներ Խալդի հզօր, ողորմած» (մնացեալն կրկնութիւն է XIII<sup>րդ</sup> վերջին սողերի):

Արձանագրութիւն XX<sup>րդ</sup>, Մ. Սիմատեանց սրբազանը գտել է 1884 թ. Մօլլապայէզիտ գիւղում վերոյիշեալ XIII և XIV<sup>րդ</sup> արձանագրութիւնների հետ. վերջին երկուքը փութաղբի տալով ս. Էլմիսմանին, առաջինը թողել է իւր տեղում և մինչև անգամ չէ հրատարակել «Աւերուի», էջերում, կարծելով թէ արձանագրութիւնը անընթեռն է: Երբ

ես ժամանեցի ս. Էջմիածին (1893 թ.), գրում է պ. Նիկողոսի, զինաներով իմ խըն-  
դիրքին կաթողիկոսական տեղապահ Երեմիա  
սրբազանը հրամայեց բերել տալ Մօլլապալէ  
գիտից արձանագրութեան քարը և զետեղել  
Գ. Ճեմարանի թանգարանում. այս տեղ ես  
լուսանկարեցի արձանագրութիւնը և մի քանի  
էստամպաւներ հանեցի նորանից: Արձանա-  
գրութեան մակերևոյթը, արդարեւ շատ քայ-  
քայուած ու ջնջուած է. համարեա բոլոր ալ  
կողմը և ստորին կողմի կէտը կտրուած է.  
մէջ տեղում քառանկիւնի փոս է, ինչպէս  
Գաշապետունի երկրորդ արձանագրութեան  
վրայ: Չնայելով քարի այդ անլուսայի դրու-  
թեան, ինչ յաջողեցաւ մասամբ վերծանել,  
մասամբ էլ վերականգնել առաջին հինգ տո-  
ղերը, որ հետեւեալն են.

« Խաչդիւ տիրոջ այս տունը Սարգսուրի,  
որդիւ Արգիշտիի վերականգնեց, ապաւանքը  
կործանուած նորոգեց, զարգարեց, ամուր  
պատեցը իւրաքանչիւրն Սարգսուրի, որդի  
Արգիշտիի, բարձրացրեց . . . . .  
. . . . .  
. . . . .

XIX<sup>րդ</sup> արձանագրութիւնը XI<sup>րդ</sup>է հետ  
գտել է Մեսրոպ սրբազանը 1869 թ. Արմաւրի  
ստորոտում, ուրեմն դա առաջին բեկեղեր  
յիշատակարաններից մէկն էր, որ գտնուած  
էր Անգղիոյկասում: Մինչև 1893 թ. ար-  
ձանագրութիւնը վերծանուած չէր, մինչև որ  
ես լուսանկարեցի այն: Թէ և արձանագրու-  
թիւնը քարի բեկորի վրայ է, այնու ամենայ-  
նիւ շատ հետաքրքիր է իւր ըզմանակու-  
թեամբ. նա պատկանում է Ռուսա թագա-  
ւորին, Էրիմենի որդուն. այս Ռուսայի մա-  
սին մինչև ցայժմ մենք գիտէինք պղնձի  
սպարներին վրայ եղած արձանագրութիւն-  
ներից, որոնք գտնուած էին Վանի շրջա-  
կայքում (Թոփրազ-գալէ), որ լոյս ընծայե-  
ցին մասամբ Սէյսը, մասամբ էլ Բելլը:  
Սէյսը նմանեցնում է դորա Ասորեստանի  
թագաւոր Ասուրբանիպազի արձանագրու-  
թեան Ru-sa-a-ին, երբ աւանդում է, թէ  
էլյամի թագաւոր Թէւալմանին յաղթելուց  
յետոյ, նա, Ասուրբանիպազն մի զետպա-  
նուիւն էր ընդունել Ռւրաբաու թագաւոր

Ռուսայի կողմից, որ ընծաներ ուղարկել էր  
նորան: Այդ իրողութիւնը պատահեցաւ 655  
թ. նախ քան զԳրիստոս: Գիտութեան արդի  
գրութեան համաձայն այս նմանութիւնը շատ  
բնական է երևում: Հաւանական է, որ այս  
Ռուսա (կամ Ռւրծա), իւր թագաւորութիւնը  
սկսած լինի Ասուրբանիպազի հօր Ասուր-  
գազդնի ժամանակ, ըստ որում համանուն  
Ռուսային մենք հանդիպում ենք Ասորես-  
տանի օրհներգերում Ասարգազդնի օրե-  
րում: Արդ, եթէ վերջին թագաւորն, որին  
մենք տեսնք աշխարհակալի և երևանեան  
տափարակում շինողի դերում, այսինքն Սար-  
գուրի երկրորդը ժամանակակից էր Ասորես-  
տանի արքայ Տիգլատ-Պիլեսեր երրորդի, որ  
թագաւորեց 745—727 թ. նախ քան զԳրիս-  
տոս, ուրեմն ժամանակամիջոցն նորա և Էրիմե-  
նի որդու, Ռուսայի մէջ պիտի լինի 80—90  
տարի: Միջանկեալ թագաւորութիւններից մեզ  
յայտնի է միայն համանուն Ռուսա առաջին,  
Սարգուրի երկրորդի որդու թագաւորութիւնը,  
որին արձանագրութիւնը մենք էստամպաթի  
օգնութեամբ հանելով, վերծանեցինք 1893  
թ. բայց նորանից մենք արձանագրութիւն  
չունինք Արմաւրում, և նորա գործունէութեան  
մասին Երասխի հովտում տեղեկութիւն չու-  
նինք: Այս Ռուսա մեծաւ 714 թ. նախ քան  
զԳրիստոս, Ասորեստանի թագաւոր Սարգսնի  
թագաւորութեան ութերորդ տարին: Այսպէս,  
ուրեմն Ռւրաբուտի պատմութեան մէջ մօտ  
60—70 տարի թագաւորների պակասորդ է  
նշմարում, յիշատակարանների բացակայու-  
թեան շնորհիւ. այդ պատճառաւ մենք չգի-  
տենք պատկանում է արչեօք Էրիմենի որդի  
Ռուսա երկրորդը նոյն հարստութեան, որին  
պատկանում էին Վանի բոլոր վերջոյշեալ  
թագաւորներն մինչև Ռուսա առաջինը, որ-  
պէս և չգիտենք ի՞նչ վիճակին ենթարկու-  
ցան Մենուա, Արգիշտի, Սարգսնի (և Ռուսա  
առաջինի) նուաճած գաւառներն Երասխի հով-  
տում: Արձանագրութեանց այս պակասու-  
թիւնը հազիւ թէ պատահական է. այն սաւ-  
կալի պարտութիւնից յետոյ, որ կրեց Ռւ-  
րարտուի թագաւորութիւնը Սարգսնի երեսին,  
երբ անկաւ Ռուսա առաջինը, նորա զիւ-  
ցազնական ջատագովը, երեւի սկսվում է

անկման ժամանակափնոցը և ոչ միայն պա-  
գարում են Վանի թագաւորների արշաւանք-  
ները զէպ ի հիւսիսային երկրներ, այլ և  
պետութեան կենդրոնում, Վանի լճի եզեր-  
քում, թագաւորութեան և ժողովրդի ոյժերը  
ջլատվում են: Միայն 60—70 տարւոյ յե-  
տոյ դարձեալ երեան են գալիս արձանա-  
գրութիւններ, որոնց մէջ Ռուսա երկրորդը,  
նայելով իւր տիրողանքին, հռչակում է  
նոյնպիսի թագաւոր Վանի, ինչպիսի էին նորա  
նախորդները. ասպարնների վրայ փորագրուած  
արձանագրութիւնները վկայում են, թէ նա  
մահանները զարդարում էր ասպարններով:  
Արմուրի արձանագրութիւնից մենք տեսնում  
ենք, որ նա թագաւորութիւն ունէր հիւսի-  
սում նոյն սահմաններում, ինչպէս և Արգիշտի  
և իւր գործունէութիւնը նուիրեց շինութեանց  
յիշեալ թագաւորի հիմնած Argistihinili  
քաղաքում: Աւելի բան մենք չգիտենք Ռուսա  
երկրորդի գործունէութեան մասին, և շատ  
ցաւում ենք՝ որ սոյն թագաւորից ուրիշ ար-  
ձանագրութիւններ զեւ չեն գտնուած: Գուցէ  
յետագայ հետազոտութիւնները կ'ըստնեն այս  
պակասորդը: Ահա նորա արձանագրութիւնը.  
« Ռուսա, որդի էրիմինի, այս տունն ամ-  
բացրած շինեց այս 1432 քարերից »:....  
Արձանագրութեանս բնագիրն վերականգ-  
նուած է համաձայն պրոֆ. Գ. Միւլլերի  
հրատարակած արձանագրութեան (տես *Die  
Keilinschrift von Aschur-Darga*, (1845,  
Wien 1886), որ գտնուեցաւ Աստուածա-  
շինի աւերակներում Վանի մօտ և բովան-  
ջակում է զուգահեռասար բնադիր, որը  
սակայն պատկանում է ոչ թէ Ռուսա երկ-  
րորդին, այլ Արգիշտի առաջինի և Պրոֆ.  
Միւլլեր նշանաւոր է համարում այս ար-  
ձանագրութիւնը նորա քանի մի նոր բառերի  
համար, որով հարստանում է Վանի լեզուն.  
այդ բառեր հետեւեալ երեքն են 'ari, šu-u-ni,  
և kapistini, որոնց մեկնութիւնը մենք  
տուինք մեր այս յօդուածում: *Классическо-  
мая надпись из Ганг-Тара около Эр-  
сакн* (Քևեադիր արձանագրութիւն Գանդը-  
թեփէից Երեսնի մօտ). տես *Труды Вос-  
точной Коммиссии 2 Т. вып. I.*

## ԳԼՈՒԽ Գ

### ԱՐԳԻՍՏԻՆԱ, ԿՈՒԼԻԱՆԱ

(Argistihina, Kuliaini).

Արագածը իւր ֆիզիքական պայմաններով  
հանդերձ մօտ լինելով Երասխի հովտին՝  
յարմար տեղ է բնակութեան և զինուորական  
զբաղմանց համար: Նորա արամագիծը (*Ar-  
maggad*) 30 մինչեւ 40 վերստ է, իսկ բար-  
ձրութիւնը կենդրոնում հասնում է 13436  
ոտն. Արագածը տակաւ առ տակաւ և ան-  
նկատելի կերպով բարձրանում է իրան շրբ-  
ջապատող դաշտավայրի միջում, մինչդեռ գառ  
ի վեր և գոռաբերանելի Արարատը «ուշ-  
դորդ ի յերկրէ բուսեալ» է, ըստ Մ. Խո-  
րենացւոյ: Վերջինս ամայի և անմաշակելի է  
մարդկային բնակութեան համար, և համա-  
րեալ թէ զուրկ է լեռնային գետակներից.  
ընդհակառակն՝ Արագածը իւր խոնարհեալ  
և լայնատարած լանջերով շատ յարմար է բը-  
նակութեան կուլուորայի համար, և նորա  
ձիւնապատ գագաթներից և լեռնային լճերից  
անբաւ առուակներ են հոսում, որոնք նեղ  
ձորերի միջից իջնելով լեւը շրջապատող առ-  
թագին դաշտերը, ոռոգում են նոցա: Արա-  
գածի աւելի ցած տեղերում կարող է զար-  
գանալ զինեղործութիւնը, իսկ միջին բարձ-  
րութեան վրայ հողն առատօրէն բուսցընում  
է ցորեան և վարսակ, որոնք առանձին խը-  
նամք և սոռզումն չեն պահանջում: Արագա-  
ծի միայն վերին շերտերը, նորա չորս ձիւ-  
նապատ արածայր գագաթների ստորոտում,  
անյարմար են երկրագործութեան համար.  
բայց այնտեղ էլ հովուական կեանք վարող  
Քրդերը լաւ արօտատեղի են գտնում իւր-  
եանց հօտերի համար, քաշուելով լեւը ա-  
մարային ժամանակ: Ներկայումս Արագածի  
լանջերի վրայ կան հայկական բազմաթիւ  
ծաղիկեալ գիւղեր, և մեծ քանակութեամբ հին  
ճարտարապետական յիշատակներ, եկեղեցիք:

և վանքեր, որ վկայում են, թէ աւելի հին ժամանակներում կոչուողաւ աւելի գերազանց էր այժմեանից, և բնակիչներն շատ էին և հարուստ:

Գոռուար է ենթադրել, որ Արագածը Ուրարտեան շրջանում չունենար իւր յատուկ պատմութիւնը Դաշպուտունի ու Արմավրի նշան, որ նա իւր բազմաթիւ գետակների, ձորերի ու բարձրաւանդակների շնորհիւ, ուր ներկայումս այնքան կեանք և կենդանութիւն է թագաւորում, չնպաստէր փոքրիկ, անկախ իշխանութեանց գոյնաւորուն Ուրարտեան ժամանակաշրջանում: Երբաւ հիւսիս արեւմտեան լանջերում, Ղուլիճան գիւղում 1884 թ. ժայռի վրայ գտնուեցաւ մի բնեւորագիր արձանագրութիւն: Այս իրողութիւնը առիթ է տալիս արդէն կարծելու, թէ Արագածը զրաւում էր իւր մօտ Վանի աշխարհակալներին: Էւ հագիւ թէ հնարաւոր էր որ և իցէ աշխարհակալին ամուր Խոթուի հաստաւ տուել Երասխի հովտում, առանց ապահովութեան միջոցների ձեռք առնելու Արագածի կողմից, որ յարմարագոյն տեղն է՝ թէ՛ յարձակումն գործելու և թէ՛ ապաւինելու: Բաց ի դորանից՝ Արագածի վրայից էին անցնում բնական ճանապարհները դէպ ի հիւսիս, ուր ակներեւ է, որ դիմում էին Վանի աշխարհակալները: Այս ամենը ինձ յորդորում էր ուշի մտօք ուսուցնաւորել Արագածի որպիսութիւնը, Ուրարտեան աշխարհակալութեան հետքերը գտնելու դիտարկութեամբ այս վայրում կամ, դո՛ւ՛ն՝ նշանակել այն ճանապարհները, որով ընթանում էին Արագածի վրայից դէպ ի հիւսիս Վանի թագաւորները:

Արագածը հետազօտելու միջոցին նախ և յառաջ գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել այն տեղի վրայ, ուր գտնուած է բնեւորագիր արձանագրութիւնը, այսինքն հիւսիս — արևմտեան լանջերի վրայ, ուր Ղուլիճան գիւղն է: Բնակաւն և ամենայարմար ճանապարհն Երասխի հովտից դէպ ի Ղուլիճան, ներկայումս, առանում է Բաթաղի հովտից լայն ու հարթ ձորով Ապարանի Արագածի արևելեան լանջերով, յետոյ ճաւապարհը փոքր ինչ բարձրանալով՝ ծալում

է Արագածից դէպ ի հիւսիս սակաւաբնակ վայրերով, ուր ապրում են, ըստ մեծի մասին, Քրդերը և ապա իջնում է Արագածի հիւսիս — արևմտեան կոչուողական և հարթ տեղերն: Այստեղից հիւսիսի տեսարան է բացւում հնոյն Հայաստանի պողոտանք գաւառներից՝ Շիրակի վրայ: Հեռուից կարելի է տեսնել Արփա-չայի հովիտը, Ալեքսանդրապոլը, որի ետեղից երևում էին Բարձր Հայոց, այժմ Կարսի նահանգի գեղանի լեռները: Կլիման այստեղ աւելի մեղմ է, ազգաբնակչութիւնը խիտ և կեանքը ամենուրեք աւելի լի է կենսական պիտոյքներով, քան թէ Ապարանում: Այստեղ, Գարանկա լեռնային գետակի ափին, որ բոլորում է Արագածից, 18 վերստ հեռու Ալեքսանդրապոլից, կայ մի գիւղ Ղուլիճան (70 տուն բնակիչներ): Գետի աջ եզրերը, ուր գտնւում է գիւղը, զատ ի վեր և ժայռոտ է, բայց շատ բարձր չէ, միւս ափը ցած է և խոնարհուած: Փարսիում, գիւղին ներքև, կայ մի խոտը, ուր փորագրուած է արձանագրութիւնը. հնայելով ջրի կակղութեան՝ արձանագրութիւնը փաստուած չէ և պահպանուել է ամբողջութեամբ: Սկզբում ես զարմանում էի, թէ ինչո՞ւ Արդշատի թագաւորը գետեղել է զորան այնպիսի անտեսանելի տեղում. բայց ի նկատի առնելով ջրի գեղեցիկ պահպանուելն, եւ համազօրեցայ, որ արձանագրութեան յատուկ այսպիսի դրութիւնը, այս աննկատելի և զանազան պատահարներից պաշտպանուած տեղում, կարող էր միայն ազատել նորան քայքայումից 3000 տարուայ ընթացքում: Յետոյ անձամբ գննելով ուրիշ արձանագրութիւնների դրութիւնը, եւ հասկացայ, որ Ուրարտեան թագաւորները իրենց արձանագրութիւնների համար ժայռերում տեղ ընտրելու միջոցին դիտմամբ խուսափում էին աչքի զարնող վայրերից, որպէս զի չգրաւեն նոցա վրայ թափառաշրջիկ անցաւորների ուշադրութիւնը. այլ ընդհակառակն, ընտրում էին բաւական անմատչելի տեղեր, որ ինքն բնութիւնը հովանաւորում ու պաշտպանում էր զարքի կործանիչ ազդեցութիւնից և մարգտա բարբարոս ձեռքից: Այս հեռաւորութեանն են

պարտական նոցա, որ նոցա արձանագրութիւնները անփաստ հասել են մինչև մեր օրերը: Միայն այժմ, երբ զոքա, շնորհիւ իւրեանց բարձր Հնախօսական նշանակութեան, իւրեանց վրայ զարձրին գիտական աշխարհի ուղադրութիւնը, կարելի է երկիւղ կրել նոցա ամբողջութեան և պահպանութեան համար:

Ղուկիճանում ես յոյս ունէի տեսնել 44 տող արձանագրութիւն, ինչպէս նշանակուած էր Մեսրոպէ արքեպիսկոպոսի սրբազրութեան մէջ, և ինչպէս էլ ինքն էի հրատարակել, և ընդ սմին սպասում էի այն տարօրինակ իւրողութեան վաւերացմանը, որ այս արձանագրութիւնը, հակառակ Ասորեստանեայց և Վասնի արձանագրութիւններին, թոյլ է տալիս բառի մասերը փոխադրել մի տողից զկայ ի միւրը — մի հանգամանք, որ զարմացում էր նաև արևմտեան ուսումնականներին. սակայն ճիշտ քիչ մեծ եղաւ իմ զարմանքս, երբ ստուգեցի թէ, արձանագրութիւնը բաղկացած է ոչ թէ 44, այլ միայն 7 տողերից, և նորա մէջ չկայ բնաւ բառի մասերի բաժանումը փոխադրութեան համար: Ի՞նչ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ընդօրինակող Մեսրոպէ սրբազանի երեակայութիւնը միայն, որ առիթ տուաւ ուսումնականներին շատ նուրբ, բայց անպտուղ ենթադրութիւններ անելու: Սակայն, այնու ամենայնիւ, մեր վերծանութիւնը արձանագրութեան, Մեսրոպէ սրբազանի սրբագրածից, միանգամայն ճիշդ էր, որով հաստատուեցաւ նաև Դուրբանի բազմաթիւ անուան ստուգութիւնը, որ առաջ երկբայելի էր: Արձանագրութեան մէջ խօսում է Կուլիտինի երկրի և Դուրբանի բազմաթիւ նուաճման մասին: Այնտեղ էր, որ մենք գտնուում էինք այս հին Կուլիտինի երկրի սահմաններում, և շատ կարող է լինել, որ արդի Ղուկիճանը պահպանել է փոփոխութիւն (տուրանացրած) ձևն երկրիս հին անուան:

Արձանագրութեան աշխարհագրական անշարկներն մեծ նշանակութիւն ունին մեզ համար, ըստ որում հնարաւորութիւն են տալիս մեզ, համեմատելով ուրիշ փաստերի հետ, գաղափար կազմել տեղւոյս քաղաքա-

կան և տնտեսական պարագաների մասին 8 դար նախ քան զՔրիստոս: Եթէ Արգիշտի Մեծն արժանի է համարել իւր տիրապետած Կուլիտինի երկրի և Դուրբանի բազմաթիւ տարածքին, յիշատակը յաւերժացնել առանձին արձանագրութեամբ, որ անփաստ հասած է մինչև մեր օրերը, այդ հանգամանքից կարելի է եզրակացնել, որ այս երկիրն ու քաղաքը այն ժամանակ ոչ աննշան քաղաքական նշանակութիւն ունէին: Ինչպէս արդէն ասացինք, այն ժամանակները բոլոր աշխարհը բաժանուած էր զատ զատ անկախ թագաւորութիւնների կամ իշխանութիւնների, որոնց կամաց կամաց նուաճելն Ուրարտեան թագաւորների արշաւանքների գլխաւոր նպատակն էր: ջննդելով այն տեղի բնական պայմանները, ուր գտնուում է Ղուկիճան գիւղը, ես եկայ այն եզրակացութեան, թէ զոքա շատ էին նպաստում այս տեղ մի նշանաւոր և անկախ աշխարհի գոյանալուն: Գաւառիկա (սաճիկերէն, Գարան—կու) գետակն, հայերէն Կարիաշան (այսինքն, Կարիաշահո) հոսում է Մանիշաձ ձորից, որ Արագածի ամենամեծ և նշանաւոր ձորերից մէկն է. նա սկսւում է Արագածի բուն իսկ ձիւնապատ կատարից, 15 վերստ հեռու Ղուկիճանից: Դուրս գալով լեռնագոտու անձուկ ձորձորներից զկայ ի խոնարհեալ բարձրաւանդակը Ալեքսանդրապոլի լանջերի, Գաւառ—կու գետակը բաժանւում է երեք թեւերի, որոնց մէկը, որ անելի հիսիսային ուղղութիւն ունի, անցնում է Նորաշէն, Ղօլղաթ և Իլիկապի գիւղերի մօտից, երկրորդը՝ Արգիշի գիւղի մօտից. իսկ միջին թեւն այն է, ուր Ղուկիճանն է կանգնած: Հոսելով զկայ ի արևմտեան—հիւսիս՝ երեք թեւերը միանում են Ասորեստան գետին չհասած, որի մէջ և թափւում են Ալեքսանդրապոլից 10 վերստ ներքեւ: Այս Գարան—կու գետակը իւր ջրերով ներկայումս էլ նշանաւոր է. տեղւոյս տնտեսական կեանքի համար. բոլոր գիւղերն ուրա մօտն են և նորանից են առնում ջուրը իւրեանց պէտքերի համար, դաշտերը ջրելու, և այն: 15 գիւղեր մէկը միւսից ոչ հեռու տարածուած են այն թեւի մօտ, ուր Ղուկիճանն է (Մեծ և Փոքր Արլիվէյի, Եագան,

լար\*, Ղուլիճան, Ղասիմալի, Քեմֆլարու, Ղազաննի, Մէլէիտլի, Թումարլաշ, Հոռու, Գուլթու-գշլագ, Խմերխանը, Թալիպօղլի, Ճլօֆխան և Խլի-Գարագիլիսէ\*\*): Գոքա բուրբ ունեւոր են, իսկ մի քանիսը հարուստ և ծաղկեալ դրութեան մէջ են, մանաւանդ Արթիւլի, Հոռու և Գարագիլիսէ: Գեներ ձուրբում կենդրոնանում է տեղւոյս ամբողջ կեանքը, ջրմուղներ, ջրաղացներ մի վերստաշափ հեռաւորութեամբ մինը միւսից, մեծ կույտութեան ճանապարհի տեսարան են ընծայում մեզ: Եթէ այսպիսի են արդի պայմանները, Հին Ժամանակը գոքա ակելի նշանաւոր էր և նպատակած պիտի լինէին մի ուրոյն քաղաքական մարմին կազմելու տեղւոյս բուրբ բնակիչները: Եթէ ներկայումս այս գիւղերը կապուած են միմեանց հետ ջրմուղների մի ցանցով, ի հնումն անտեսաւ կամ շահերը հասարակաց էին և առիթ պիտի տային քաղաքական շահերին, այն է ստեղծել մի անկախ քաղաքական պետութիւն, որ կոչուած էր Կուլիճանի, որի կենդրոնն Դուրուբանի քաղաքն էր:

Կասկած չէ կարող լինել, որ Դուրուբանի քաղաքը կանգնած էր կամ արդի Ղուլիճանի տեղում և կամ նորա մօտակայքում: Ղուլիճանը կենդրոնական դրութիւն ունի այս տեղում՝ և քաղաքական և կույտութեան տեսակէտից կարող էր կենդրոն լինել: Այն տեղ, ուր գիւղն է, Գարան-կու գետը շեշտակի դանդում է գէպ ի արևմուտք և անկիւն է ձևացնում. ապա երկու վերստ հասնելով ձորի միջով, դուրս է գալիս համարեա թէ տափարակ գաշալը: Ուրեմն, բռնելով ձորի գլուխը, իշխելով գաշալի վրայ միւս եզերքում գետի, Ղուլիճանի գերբը շատ յարմար էր ամրացրած քաղաքի համար: Իլլի բարձրութիւնից բացւում է փառահեղ տեսարան, մի կողմից Արագածի վրայ, միւսից Ախուրեանի լայնատարած հովտի: Հարցու-

փորձ անելով տեղացի բնակիչներից և զընդելով Հին առարկաները, որոնք զանազան Ժամանակ գտնուած էին բուն գիւղում և նորա շրջակայքում, ես եղալիացի, թէ այս տեղը, զոնէ Սասանեանց օրերում, առաւել մեծ նշանակութիւն ունէր, քան թէ այժմ: Գիւղացիք ցոյց տուին ինձ մեծ քանակութեամբ արձակեալ դրամներ Հռովմայեցոց առաջին դարու կայսրների, առաւելապէս Օգոստոսի, Սասանեանց ակնեղէնք պեհլուի արձանագրութեամբ. ի միջի այլոց ես գնեցի մի դրամ ևս Շապուհ առաջինի (238-269 թ. Քրիստոսի), որի վրայ գրուած է

مزدیسنه بگشهی هری ملکان ملک

այսինքն, պաշտոյ Արամագիի, աստուածափառ Շապուհ, արքայ արքայից Իրանի, երկնային ժեռուղի (ըստ մեկնութեան Պ. Վ. Տրուստովսկու):

Այս բոլորը գիւղացիք գտել էին գետինը փորելու Ժամանակ գիւղում և դաշտերում. բաց ի գորանից նորա անդադար հանդիպում են քարեայ դամբարանների, մարդու ոսկորների և կանգէն անօթների, մանաւանդ շատ ոսկորներ գտել են տներ շինելու միջոցին: Նայելով դրամներին ու ակնեղէններին, կարելի է գուշակել, որ տեղւոյս կույտութեան շերտը հասնում է, զոնէ մինչև քրիստոնէութեան առաջին դարերն. իսկ այսչափ մեաշորները ներկայութիւնը ապացուցանում է, թէ այստեղ եղած է Հին գերեզմանատուն, որ մշակուած է և ոչնչացրած գիւղացիների ձեռքով, իւրեանց բնակութեան տեղ շինելու համար: Այս գերեզմանատունը ըստ սեսաւկին պատկանում է, անկասկած, այնպիսիների կարգին, որ պեղել էր Վ. Բելլը Գանձակի նահանգում. և այն հանգամանքը, որ ներկայ գէպքում զա գտնուած է բնեռապիտ արձանագրութեան մօտ, հաստատում է Վ. Բելլի\* Խնթաղութիւնը, թէ քարեայ գերեզմանները Գանձակի նահանգի պատկանում են վանի թագաւորների դարուն: Յետագայ յատուկ խուզարկութիւնները այս

\* Վերայիշեալ բոլոր գեղերի անունները, բացի Կաշալարից, մենք ստուգեցինք Հ. Ղ. Ալիշանի Միտակից: Ծան. Թարգ: ԳՏԵ Հ. Ղ. Ալիշանի Այրարատը:

\* W. Belek. Archeologische Forschungen in Armenien. հայլն:

տեղի (որ շատ անհրաժեշտ է) կարող են լոյս հանել առօրեայ կեանքի շատ իրեղէններ։ Ուրարտեան ժամանակից, որից հաւանական է կարծել, որ տեղւոյս նշանակուած թիւնը յաջորդաբար անցած լինի և Սասանեան ժամանակներին։

Բայ ի բուն Ղուլիճանից, Հին բնակութեան հետքեր գտնուում են նաև Գարանկուի ձախ ավերում, այն տեղի հանդէպ, որ բնեռագիր արձանագրութիւնն է։ Այդ տեղը մի վերստի չափ երկայնաձիգ բլուր է. այս բլուր տարածութեան վրայ գտնուում են լքեալ բնակարանների հետքեր. իսկ բլրի մէջ կայ մի բարանձաւ, որի մուտքը գետի կողմից 5—6 մետր է։ Մուտքը փակուած է քարերի կոյտերով, որ հրամայեցինք հեռացնել ու բանալ՝ և անցքից 2—3 մետր ցած իջնելով, ներս մտանք քարանձաւը. վերջինս 12 մետր երկայնութիւն ունի և 7 մետր լայնութիւն. առաստաղը կամարաձև է 2 մետր 6 սանտիմետր բարձրութեամբ։ Բլուրը չորս կողմից, զուգաչափ հեռաւորութեամբ, զետեղուած են միմեանց հանդէպ չորս մուտքեր որ տանում են դէպ ի նեղ անցքերը. սոցանից երկարաչափը, մոտ 8 մետրի, որ տանում է դէպ ի հարաւ, ալ կողմից, վերջանում է երկու ելեկէններով ջրհորի նմանութեամբ։ Նոյնպիսի ելեկէ կայ նաև նոյն նեղ անցի ալ կողմում։ Արդ՝ որովհետև մենք Ղուլիճանում էինք օրուայ ամենատօթ ժամանակին, ուստի մեզ անհնարին էր երկար մնալ քարանձաւում. խոնաւ ու ցուրտ օդը շատ փեսակար էր առողջութեան համար, և մենք զննելուց յետոյ քարանձաւը՝ իսկոյն զուրս ելանք։ Գիւլացիք մեզ պատմում էին, թէ ելեկէները դէպ ի ցած տանում են ուրիշ անձանք ևս, որոնք իբր թէ շարունակում են մինչև դաշտերը, մի վերստ հեռաւորութեամբ քարանձաւի մուտքից։ Սոցա մէջ նոցա վկայութեամբ կարող էին զետեղուել 5000 մարդ. ափսոս, որ ես չկարողացայ ստուգել այդ հետաքրքիր ցուցումները։

Որովհետև Գարանկու գետակը արժանի է խորին ուշադրութեան, ուստի միտքս դրի հետազօտելու նորա եզերքի բլուր վայրերը, Հին շինութիւնների աւերակները և անձաւ

ները։ Այդ դիտաւորութեամբ հարկադրուեցայ անցնել Գարանկուի ձորը, սկսեալ Գեաթիթարլու գիւղից, ուր Գարանկու գոլոս է գալիս ձորից, դէպ ի վեր ըսան վերստ հեռաւորութեամբ մինչև այն տեղը, ուր ձորն աւելի անձուկ է դառնում և բնակութեան վայրերը բացակայում են։ Ղասիմալի գիւղում, մի վերստ հեռու Ղուլիճանից, գետի ձախ եզերքում կայ մի բլուր կալաճի, ուր մնացել են փոքր ամրոցի հետքեր, որպէս և մի անձաւ. այս վերջինը, համեմատաբար Ղուլիճանի անձալի հետ, փոքր է (9 մետր երկայնութեամբ և 7 լայնութեամբ)։ Անձալի մէջ փչում է թափանցիկ քամի, որ վկայում է մի այլ մուտքի գոյութիւնը, որ ինձ չյաւոյեցաւ գտնել։ Յետոյ՝ անցնելով Եաղնիար գիւղի մօտից, մենք հառանք Մեծ ու փոքր Արբիւլէի գիւղերը. Մեծն՝ գետի ալ ափում է, փոքրը՝ ձախ։ Մեծ Արբիւլէի բաւականին մեծ է (120 ծուխ), եկեղեցին նոր է, բայց կան երկու Հին եկեղեցիների աւերակներ, միմեանց մօտիկ. շատ փոքրիկ են դռն՝ մատուռների նման, 15—18 կանգուն երկայնութիւն ունին և 9—12 լայնութիւն, պատերը կոփածոյ քարերից են շինած, մի և նոյն նիւթից և միատեսակ տաշուած ինչպէս Ղլքիպաղ վանքում։ Մնացել են սիւնների խորիսիները, բազմաթիւ Հին խաչեր և նկարագեղ քարեր։ Այս շինութիւնների ծագման մասին տեղացի գիւղացիները ոչինչ չկարողացան հաղորդել մեզ, վասն զի նոքա այս գիւղում բնակում են միայն 1830 թուականից։ Հակառակ կողմում, փոքր Արբիւլէու մօտ, 30 կանգնաչափ բարձրութեան վրայ, կան երեք անձանք, որոնց մեծ ծագոյնը Ղուլիճանի քարանձաւից մեծ է (60 կանգուն երկար. 36 լայն. 4½ բարձր.). մուտքի ձախ կողմում կայ բարձր հրապարակ, անկիւնում փոս դէպ ի ցած ջրհորի նման. ետեից նեղ անցք, որ փակուած է քարերով։ Միւս երկու անձանքերը փոքր ինչ ներքև են. հաւանական է, որ դռն հաղորդակցութիւն ունին միմեանց հետ։ Ընդ մօին ի դէպ եմ համարում յարելու, որ Մեծ Արբիւլէու եկեղեցում՝ կան Հինգ մաւաղաթեայ աւետարաններ մանրանկարներով

զարգարած, չորսը ունին թուականներ (1587, 1595, 1624 և 1726 թ.) և մէկն անթուական է, որ, ինչպէս երևում է նորահոգեւորական նշաններով, ՓԶ դարու վերջերի գործ պիտի լինի։ Փորը Արքեպիսկոպոս Նոյնպէս պահուում է մի աւետարան թղթի վրայ գրուած, կարծեմ ժէ. դարու գործ է։

Արքեպիսկոպոսի վեր ձորը նեղանում է, ուստի և մենք հարկադրուած էինք թողնել ձորը և ընթանալ աջ եզերքով։ Բոլոր տեղը, գիւղերից սկսեալ, ներկայացնում է մի երկայն բլուր, որ ձգուում է մի քանի վերստ\* ձորի ուղղութեամբ և զուգահեռաստի հետաւորութեամբ նորանից։ գիւղից երկու վերստ հեռու սկսում են մի պատնէշ և մի մեծ գիւղի աւերակներ, որի հետեւը շարունակում են 2—3 վերստ։ Բլրի լայնութիւնը կէս վերստից աւելի է։ Մի տեղում կան մի մեծ շինութեան աւերակներ, գուցէ եկեղեցու, ըստ որում տեղ տեղ ընկած են խաչների բեկորներ։ Մի քանի տեղերում մնացել են տների հիմունքներ, և ամբողջ ձիթահանք, շինուած մեծամեծ քարերից։ Բուն իսկ ձորի մէջը պահպանուած են երկու ջրմուղների մնացորդներ։ Բաց ի դրանից աջ եզերքի, այն կողմում, ուր աւերակներն են, ձորի կողմում (աւերակների ներքեւում) կան բազմաթիւ քարայրներ, երեք շարքով։ Եւ հաշուեցի 15 քարայր կամ աւելի լաւ է ասել, քարայրների մուտքեր։ Բայց շատ պտուղ էր մտադրել ուղղաձիգ ժայռերի վրայ, և եւ կարծում եմ, որ նոցա թիւն աւելի շատ պիտի լինի։ Բոլոր այս քարայրները, ինչպէս երևում է, բնական են, վասն զի նոցա մէջ կան մեծ քանակութեամբ օտալակտիտներ (stalactite)։ Եւ քարձեալ յառաջ աւելցրի մի քանի վերստ ձորի միջով և հանգիստեցայ բազմաթիւ կործանուած ջրացքների, ձիթահանքների և նման շինութեան։ Այս բոլոր տեղերը շարժեցին իմ հետաքրքրութիւնը և եւ ցանկացայ քանդել և տապալել քանի մի ձիթահանքի հետազօտելու դիտաւորութեամբ, թէ չկայ արդեօք նոցա մէջ արձանագրութիւններ, ինչպէս Սարգսապատում։ Բայց տեղական քահանայ հ. Տէր-Աթանասեանցը, որ ինչ ուղեկցում էր, առարկեց թէ, այդ անհնարին է այժմ, երբ բոլոր գիւղացիները զբաղուած են այգի առնելու աշխատանքներով, գիւղից բաւականին հեռու, (դա 1893 թ. Յուլիսի 26ին էր), և թէ դորա համար հարկաւոր է ընտրել մի այլ ժամանակ։ Ի՞նչ տեղեր են գոցա, ինչ համար միանգամայն զաղտնիք մնաց, ոչ անունն է մնացել, ոչ էլ յիշատակ։

Անտարակոյս, իմ տեսած բոլոր հին քանակութեան հետքերը վերաբերում են յետին Հայոց ժամանակաշրջանին։ Բայց այստեղ հարկ է ենթադրել մի քանի կուլտուրական զանգուածների ներկայութիւն։ Ոոյն վայրերում գտնուած Արքեպիսկոպոսի թագաւորի յիշատակարանը երկրի ու քաղաքի անուամբ, հերթէ է կարծելու, թէ վաղուց թողած այս բնակչութեան տեղերում պէտք է որոնել Ուրարտեան ժամանակի կուլտուրական հետքերը։

Բայց խնդրելի է թէ արդեօք ամբողջ Արագածի վրայ կուլտիւրին միակ եւեթ քաղաքական մեծ երկիրն էր, որ կարող էր իւր վրայ հրաւիրել Ուրարտուի միապետներին ուղղութեամբ։ Կային արդեօք Արագածի վրայ այդ միջոցին և ուրիշ անկախ քաղաքական մարմիններ—երկիրներ, ըստ տեղմիտօյզիայի Վանի արձանագրութիւնների։ Մինչև այժմ Արագածի սահմաններում, բաց ի Ղուլիճանից, չյաւոյեցաւ զանեղ բնուած գիր արձանագրութիւններ, ուստի հաստատուն փաստեր չունինք այս խնդրի լուծելու։ Բայց արձանագրութիւնների այս բացակայութիւնը ներկայումս դեռ չէ նշանակում, թէ այս տեղը ոչինչ գեր չէր կատարում Ուրարտեան ժամանակամիջոցին։ Արագածի արևելեան և հարաւային լանջերի վրայ եղած երկիրները, ինքն ըստ ինքեան ունեին քաղաքական նշանակութիւն, և մեզ պիտի հետաքրքրեն արդէն այն պատճառաւ, որ նոցա վրայիցն էր անցնում անկասկած, Ուրարտեան աշխարհակալների ճանապարհը Արագածի հիւսիսային կողմը։ Եւ արդարեւ,

\* Իւրաքանչիւր վերստը = 1500 կանգուն (արշին)։  
Մասնօր. թարգ.

պատմական աշխարհագրութեան համար անհշան խնդիր չէ, թէ Արգիշտի և նորա յաջորդները Արմաւուրում հաստատուելով, Բնշ ճանապարհներով միջամտին եղան Արագածից զէպ ի հիւսիս, արդի Շիրակ գաւառը, Ալեքսանդրապոլի հովիտը և յարաբերութիւն էին պահպանում լեռնային գաւառի հետ հիւսիսում:

Արմաւուրից (Արգիշտիճիհի) 45 վերստ զէպ ի արեւելք, հովտի միջով հոսում է հիւսիսից հարաւ և թափում է Երասխի մէջ, սորա գլխաւոր թեւերից մէկն Երեսնի տափարակում՝ Քասաղը: Այս գետն իւր սկիզբն առնում է Արագածի հիւսիսային լանջերից, և ապա պտոյտ գործելով՝ դիմում է արեւելեան լանջերով Ապարանի ընդարձակ ձորի ուղղութեամբ, յետոյ մտնում է հովիտ, ուր հոսում է զէպ ի ս. Էջմիածին և ապա խոհնոււմ է Երասխին: Այսպէս պտոյտ անելով Արագածի կիսի շուրջը, Քասաղ գետն աւանդանական ճանապարհ է նորա վրայից՝ հարաւից զէպ ի հիւսիս, և ամենակենսական երակն է կազմում հովտի և լեռների բնակիչների համար: Բազմաթիւ լեռնային ծործորներ և գետակներ, հասելով Արագածի բարձրագոյն կատարներից, դիմում են զէպ ի Քասաղ՝ մատակարարելով նորա համար ջուր: Այս ձորակներն իւրեանց կարգին մատչելի ճանապարհ են բացում Արագածի կատարներից զէպ ի միւս հակառակ լանջերը: Աւելի ցած լանջերում, Արագածի ստորոտում է հովտի մուտքի մօտ, Քասաղի ջրերն արհեստական եղանակով բաշխում են ջրմուղների և ոռոգում են խաղողի բազմաթիւ այգիները, որ լաւագոյնն են Երեսնի տափարակում (Օշական, Աշտարակ, ս. Էջմիածին և այլն): Քասաղի հովտով ներկայումս անցնում է բանակ խնուղին ս. Էջմիածնից, այսինքն Երասխի հովտի բուն կենդրոնից, զէպ ի Ալեքսանդրապոլ, կուտուրային շատ յարմար վայրերով:

Գիւտար է ենթադրել, որ Ուրարտեան ժամանակաշրջանում Քասաղ գետի հովիտը և Արագածից իջնող ձորերը խիտ բնակեցրած չլինէին այդ բնակիչները. հաւանական է կարծել, որ համաձայն այն ժամանակի քա-

ղաքական և ազգագրական պայմաններին, իրանցից կազմում էին մէկ կամ մի քանի իշխանութիւններ կուլիակնիի նման: Եթէ զորա նմանը մենք տեսնում ենք միւս փոքր գետերի հովիտներում, ինչպիսի են Գարանկու, Զանգի (Հրազդան), նորա թեւն (Էլառի, տեղի ցածութիւն), ուրեմն ևս առաւել պիտի սպասենք այդ բանը համեմատաբար աւելի նշանաւոր Քասաղ գետի հոսանքում: Այս տեղն, որ մի կողմից շրջապատուած է Արագածի արեւելեան և հիւսիս — արեւելեան լանջերով, իսկ միւսից Գառնի—Խարբը, Ալիբէկ և Կուրաքոզազ լեռներով, ներկայացնում է շատ բնութեամբ ձոր, լայնատարած դաշտերով, որ շատ յարմար են (կուտուրայի համար) մշակութեան: Կլիմայն այս տեղ աւելի խիստ է, քան թէ Երասխի հովտում, ամառն կարճատեւ է ու անձրեային, բաւական ոռոգելու համար հողը, որ առատորէն արտադրում է ցորեան, վարսակ և ուրիշ բոյսեր: Այս բոլոր տեղն ներկայումս հաշիւն կուտում է Ապարան: Իմ բարեկամ, Էջմիածնում, հայկաբան Հ. Գաբուստ Տէր-Մկրտչեանի վկայութեամբ, Ապարան բառը չունի ճիշդ և պարզ մեկնութիւն Հայոց լեզուում, թէ և պատահում է իբրեւ աշխարհագրական անուն Հայոց դպրութեան Ժ դարու յիշատակարանների մէջ: Բաց ի այս ամբողջ տեղի անունից, որի մասին մենք խօսում ենք, այս անուամբ կուտում է նաև գլխաւոր գիւղն Ապարանում՝ Պաշ — Ապարանը. իսկ Հ. Գաբուստը նոյն ծագումից է համարում, ինչպէս և Ապարանը՝ նոյնպէս փոքր ինչ տարբեր, Պարնի երևու գիւղերի անունը, Ապարանի հիւսիսում, որոնց մէկն Արագածի հիւսիսային լանջերի վրայ է, միւսն Ալեքսանդրապոլից զէպ ի Դիլիշան տանող պոստի ճանապարհէ վրայ: Ես յօժար եմ Հ. Գաբուստի հետ կարծելու, որ յիշեալ Պարնի և Ապարան անունները իրօք հայացրած ձևերն են այս վայրերին հին-ուրարտեան կոչման՝ Գոլանը—գրոանի (Ալանայու) արձանագրութեան մէջ, որ պատկանում է Ռուսա առաջինին՝ տող 10 յիշում է երկիրն *Piruaiani* (Պիրուաիեի) միւս 23 աշխարհների հետ, որ գտնում էին Սևանայ լճի, Երասխի հովտի և նորա

թեքերի վրայ՝ Շատ կարող է լինել, որ այս *Piruzani* նոյնն է, թէ Պարսի (Ապարան)։ Այս տեղ կը նշանակեմ միայն այն իրողութիւնը, որ տեղւոյ Ապարան (Պարսի = *Piruzani*) համեմատաբար հարուստ չէ հին յիշատակարաններով։ անկերն է, որ Հայոց ժամանակը նա շատ նշանաւոր դեր չէր կատարում։ Ապարանի նշանաւոր տեղերը, Գարազիլիսէ, Ալիքուշակ եւ Պաշ-Ապարան ներկայումս հնազիտական տեսակետից ոչինչ ուշադրութեան արժանի բան չեն ներկայացնում։ Բայց այսու ամենայնիւ, եթէ Ապարանը Ուրարտեան ժամանակաշրջանում առանձին մի դեր չէր կատարում, անկասկած, նա մի ընդարձակ ճանապարհ էր Երեւանի տափարակից դէպ ի Ալեքսանդրապոլի դաշտավայրը, շատ յարմար բազմաթիւ զօրքեր անցնելու համար։

Բայց առանձին ուշադրութեան արժանի են ֆառադի ստորին հոսանքի վայրերը։ այս տեղ էին է հնուում Հայոց նշանաւոր գաւառներն՝ Արագածոտն եւ Ամբերդ։ Թէպէտ եւ անձամբ հետազոտելով այս վայրերը, ես չգտայ Ուրարտեան տիրապետութեան վերաբերեալ յիշատակարաններ, սակայն համոզվեցայ, որ այն ժամանակները Արագածոտն եւ Ամբերդն անելի նշանաւոր պիտի լինէին, քան թէ Գարան—կուի հովիտը կուլիախիի երկրի իշխանութեամբ հանդերձ։ Նախ եւ յառաջ կուլիախիի եւ Արագածոտն գաւառների մէջ կայ մի անմիջական կապ, որ բնութիւնը ինքն է ստեղծել։ Մանթաշ ձորը՝ ուստի սկիզբն է առնում Գարան—կու գետակը եւ Ամբերդի ձորը, ուր տեղից հոսում է ֆառադի նոյնանուն գլխաւոր թևը, որ թափում է ֆառադի մէջ համարաւ դաշտավայրում (10 վերստ ստորեւ ա. էջմիածնից), իւրեանց սկիզբն առնում են Արագածի հարաւ—արեւմտեան կատարի ստորոտում, ոչ հեռու մէկը միւսից։ Վերելքը սարի վրայ դժուար չէ, թէ եւ 10,000 ոտնաչափ է այս տեղում։ Յամենայն դէպս Արագածի այս երկու մեծագոյն ձորերը սերտ միացած են եւ կտրուով են անորոշ Արագածը հիւսիսից արեւմուտը եւ հարաւից — արեւելք։ Այս բոլոր ճանապարհը մօտ 100 վերստ տարա-

ծովեամբ, Ղուլիճանից մինչև Օշական եւ անձամբ անցայ ե ինձ համար պարզվեցաւ կուլիախիի երկրի նշանակութիւնը Արագածոտնի եւ Ամբերդի նշանակութեան հետ միասին։ Միայն միանուգ տիրապետելով Արագածի այս երկու հանդիպակաց, խիստ ամուր եւ նշանաւոր լանջերին, Արգիշտի եւ նորա յաջորդները կարող էին իրանց Երասխի հովտի տէր ճանաչել։ Արգիշտիհիլի (Արմաիրը) կարող էր միայն առաջաւոր կէտն լինել այն ամրութիւնների, որոնք տարածւում էին ուղիղ գծով տափարակի կենդրոնից, Արագածի լեռների վրայից, մինչև միւս տափարակի Արագածի հիւսիս — արեւմտեան կողմում, այսինքն՝ մինչև Ախուրեան գետի հովիտը, ուր Ալեքսանդրապոլն էր։

Ամբերդի ձորն եւ Ամբերդ գետակն ունին անելի յարմար պայմաններ կուլտուրական եւ ռազմագիտական տեսակետից, քան թէ Մանթաշի ձորը եւ Գարան—կու գետակը։ Ամենակերկի բարձանց վրայ, ուր Ամբերդ ձորը ամայի տեսարան է ներկայացնում, այնու ամենայնիւ անցանելի է. բայց այն տեղում, ուր գետը հասնում է իւր միջին հոսանքին, երկիրը այնպիսի յարմարութիւններ ունի բնակութեան եւ ամրութիւնների համար, որոնց նման չկայ ամբողջ գաւառում։ Հիւսիսային, քաջառողջ կլիմայ, խոշոր անտառներ, որոնցից զուրկ է Երասխի բոլոր հովիտը, աղբիւրների ու առուների առատութիւնը, աստիճանաւոր խոնարհումն լեռների դէպ ի Երասխի հովիտը, այս ամենը տրամադրում է տեսնել այն տեղում Ուրարտուի նշանաւոր գաւառներից մէկն։ Բայց ամենից շատ այս տեղը կարելի էր յարմարացնել պաշտպանութեան համար։ Բաւականին զաղափար տալ այդ մասին կարող է իմ գնած Ամբերդ ամրոցը։ Դա գտնւում է Ամբերդ գետակի միջին հոսանքից փոքր ինչ վեր, ուղեմ, բաւական բարձրութեան վերայ, այն իսկ տեղում, ուր Ամբերդ ձորը (տանկերէն Ղամպուտ—գերեսի) միանում է Արխաշան ձորի հետ, որ փոքր է նորանից եւ նոյնպէս զուրա եւ գալիս Արագածից։ Այս ձորերի միանալուց կազմում է մի հրուանդան, որ անմատչելի է երեք կող-

մից՝ հարաւից, արեւելից և արեւմտաւելից. իսկ հիւսիսային կողմից զատուած է մնացեալ ցամաքից՝ խոր խոռոչով այնպէս որ ամբողջ տարածութիւնը թերակղզու տեսք ունի: Այս թերակղզու յետին կողմում, ուր փոքուած է խոր փոս, կանգնած է մի ահազին ամրոց, բաղկացած մի քանի միմեանց հետ միացած բլուրակ աշտարակներէից, որոնք շինուած են կոփածոյ քարերից: Աշտարակները, առ հասարակ լաւ են պահպանուած, բայց ի մէկից, որ կործանւելով վտրւիւղ է փոսի մէջ: Ամրոցից  $\frac{1}{4}$  վերստ հեռու կայ մի Հայոց տաճար՝ երկու աշտարակներով հին ճարտարապետութեամբ. եկեղեցին կիսով չափ կործանուած է, բայց այնու ամենայնիւ պահպանել է իւր նուրբ և փառահեղ ձևերը: Այս տեղ, ուրիշ բնակիչներ չկան, միայն թափառական Գրգեր են բնակուում երբեմն: Գուցէ ամրոցը Ուրարտեան ժամանակէն է: Բալոր վայրերը այստեղ և մանաւանդ շինութիւնները արժանի են առանձին հետազոտութեան: Կուտակուած հողի հաստ շերտերը թերակղզում, անկասկած, նոյնպէս ծածկում են հնութեան յիշատակարաններ:

Ամբերդ ամրոցը միակ ամբարցած տեղի չէր ձորում: Հայոց հին հեղինակների վկայութեամբ, հին ժամանակներում մի նշանաւոր ամրոց էլ գտնուում էր Բիւրականում, որ 15 վերստ հեռու է Ամբերդից, և ուր ներկայումս Հայոց կաթողիկոսի ամրարանոցն է: Ես չգիտեմ, ունի՞ն արդեօք մի որ և իցէ յարնչութիւն Ագարակ գիւղի մօտ իմ տեսած գեղեցիկ քարայրները պաշտամունքեան շինութեան հետ. բայց թէ այս քարայրները արհեստական կերպով շինուած են, դա աներկբայելի է: Դրեք բաւականին բարձրութեան վրայ են գտնուում: Քարայրների մուտքը նեղ է և փակ ծանրաշարժ քարեայ դռներով, որ երկու զօրեղ թաթարներ հաղիկ կարողացան շարժել տեղից: Դռների ետեւ կան նեղ անցքեր և նոյնպէս բաւականին անձուկ դահլիճներ սրբատաշ պատերով և մուտքերով, որ նոյնպէս ամբողջ քարերիցն են, ինչպէս որ և արտաքին դռները: Ես տեսայ երկու քարայր, մէկում հաշուեցի 3 դահլիճ,

միւսում 12: Ինչի՞ համար էին այս քարայրները ես չկարողացայ իմանալ: Այդ քարայրների դռներից մէկն այժմ պահուում է ս. Էջմիածնի Թանգարանում: Յամենայն դէպս անկասկածելի է, որ Արագածի հարաւային լանջերը աւելի հարուստ են հին կուտուրայի հետքերով, քան թէ հիւսիսայինը: Առատորէն ոռոգուած Երասխի հովիտն առ տիճանաբար բարձրանում է դէպ ի հիւսիս, պահելով սակայն իւր միաձև — գեղեցիկ և ծաղկեալ տեսարանը: Արագածի դերամատչելի լանջերը, լցուած Քառասդի և նորա թիւերի ջրերով, բարեխառն և քաջառողջ օդը տալիս էին բնակիչներին, ընդարձակ հողերի հրապարակներ մշակութեան համար, և բնդ իմին հնարաւորութիւն էին շնորհուած անհրաժեշտ ապաստան գտնել թշնամեաց յարձակութիւններից: Այստեղ դիւրաւ կարելի էր կառուցանել մի ամբողջ շարք ամրոցներ, շնորհիւ տեղիս Ֆիդիքալան բնութեան: Եւ սոյն տեղում, յատկապէս, մենք պիտի որդենեք այն երկրի դիրքը, որ Արգիշտիի օրերից ստացաւ Արգիշտիհինա (Argisti-hina) անունը, որին վերաբերում է նաև Argisti-hinili (Արմա-իլը):

Կրկնում եմ, որ իմ արտայայտած խորհրդը գածութիւններս, տակաւին չեն հաստատուում փաստերի ապացոյցներով, ինչպիսիք են արձանազրութիւններ և Ուրարտեան ժամանակից մնացած ճարտարապետական շինութեանց հետքերով, այլ յինում են Մովսիսի Խոբեհնացույ Պատմութեան Առաջին Գրքի 66 դրիւ տաւանութիւնների վրայ: Ուշադրութեամբ ուսումնասիրելով այդ գրութիւնը՝ բեւազոր արձանազրութիւններից ստացած տեղեկութիւնների հետ ի միասին, ես հասայ այն համոզման, որ այդ ամբողջ գրութին արձագանգ է Ուրարտեան աշխարհակալութեանց Մենուայի, Արգիշտիի և այլոց օրերից, Երասխի հովտում. և թէ այս աշխարհակալութիւնները վերաբրուած են Հայաստանի ազգային էպոսիմ — «իւլցադանց» Արմենակին, Արմայիսին և այլոց, Ես արդէն առիթ ունեցայ նախընթաց գլխում յիշելու, թէ Մովսիսի Խորենացույ աւանդութիւնը Արմաւրի մասին (նոյն 66 գլխ.) արմատա-

նում է՝ Երասխի հովտի, Արգիշտիի ձեռքով տիրապետելու յիշողութիւնների մէջ և յետին ժամանակի Արմաւրի տեղում՝ Ուրարտեան մայրաքաղաքի Argistihinili կառուցանելուն։ Բայց այդ յիշողութիւնները չեն վերաբերում միայն Արմաւրին, այլ ընդգրկում են Երասխի ամբողջ հովտի անցնալը։ Բայց Մ. Խորենացւոյ՝ Արմենակ, նահապետ և էյօ, նիւմ — զիւցազն Հայաստանի, որդի Հայկոյ, ելաւ Բաբելոնից և բնակեցաւ Երեանի տափարկում։ Բայց նախապէս տալիս է իւր եղբարց մէկին՝ Մանաւազին և սորա սերունդը «զեզը ծովուն աղւոյ», այսինքն Վանի։ Այս Մանաւազ անունը մէջ դուռնու է չը տեսնել Menua անունը, որի յաւկատար ձեն է Menuaše. իսկ Մանաւազեան նախարարական ցեղում, նորա հարստութիւնը (Menucheni) Մենուաչինի։ Արգ՝ եթէ Արմե, նակի Պեղբոր անունն և նորա հոշակի մէջ՝ ալի ծովի եզրում մենը Մինուայի մասին յիշատակութիւն ենը գտնուած, ապա ուրեմն, Արմենակի անունն տակ ծածկուած է բեւեռագիր տրձանագրութիւնների մէջ այնքան հոշակուած Արգիշտին։ Ահա Մ. Խորենացւոյ բուն խօսքերը. «Իսկ Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն, խաղայ յարեւել հիւսիսոյ, և երթեալ իջանէ ի խորին դաշտավայրի մի ի բարձրագագաթանց պարբապիսալ լեռանց, զետս կարկաշտասհ ի յարեւմտից ընդ մէջ անցանելով, և զդաշտն առեւելից իմն զողցես իւր որսայսեալ, ձիւ յարեգակն կոյս զերկայնութիւն պարգեալ, և ստորոտով լեռանցն բազում տկանակիտ բղիեալ աղբւրք, որ զետոց հաւարումն եղեալ հեղարար առ ոսհմանօք նոցա, ծնիւք լեռամբք և եղբորք դաշտին՝ պատանիք ոմանք իւր երիտասարդութիւնք ճեմիցն։ Այլ հարաւայինն արեգակնանեմ լեռան, սպիտակապառ ունելով զազաթն, ուղղորդ ի յերկր բուսեալ...» Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արաւմենակայ, շինէ զման ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոմս լեռինն ի նոյն կողմանէ, և զլեռան անուանէ յանգագոյն յիւր անուն Արագած, և զկարուածան՝ ոտն Արագածու» (Գիրք. Ա. գլ. ԺԲ.)։ Աւանդութիւնը այստեղ վերադրում է Արմենակին այն, ինչ

որ իւրք կատարեց Արգիշտին. այսինքն Երասխի հովտի տիրապետութիւնը, նորա կենդրոնում մայրաքաղաքի կառուցումն «յայսմ խորութեան դաշտի բնակեալ», և ապա ամբացնելն դաշտի հիւսիսային կողմերի և Արագածի հարաւային լանջերի։ Մենք արդէն ասացինք, որ Արգիշտիին բնակիւրն տարածուած էր Արմաւրից դէպ ի հիւսիս և գրաւուած Արագածի ստորին լանջերը։ Այս աւանդութեան մէջ մանաւանդ հետաքրքիր է այն, որ Արմենակը կոչում է Ալակիօզը «յանգագոյն յիւր անուն» Արագած, իսկ կալուածքների՝ Արագածոտն. բանից դուրս է գալիս, թէ Արմենակը կրում էր մի այլ անուն ևս, այսինքն Արագած։ Ուրալի ինչ յայտնի է, Արագած բառն Հայոց լեզուում չունի իւր բառազնական մեկնութիւնը, և մասնագէտների կարծիքով, որոնց ես զիմեցի, հայերէն չէ։ Ուրեմն շատ բնական է սոյն բառի մէջ տեսնել ուրարտական Արգիշտիի (Aragut) հայեցումն, իսկ Արագածոտնի մէջ — Argistihina։

Արգիշտիի յաղթութիւնները Երասխի հովտում և նորա թողած յիշատակարանները այնքան յաւերճաբերին նորա անունն հռչակը, որ ամբողջ տեղւոյս յորջորջումն նորա անուամբ մնաց մինչև մեր օրերը. իսկ նորա անունն ու զործերը ժառանգելով Հայոց աւանդութիւնը փոխադրեց Հայաստանի առասպելական եղբարց զիւսիմ — զիւցազն՝ Արմենակի վրայ։ Սակայն Հայոց աւանդութեան մէջ պահպանուել է նաև յիշատակութիւն և այն մասին, թէ նախ քան Հայերի գալն Երեանի դաշտավայրը, այնտեղ կային նախահայկական բնակիչներ մի այլ ցեղից ևս. ըստ որում Արմենակի Արագածոտն դալու պատմութիւնը անկուց յետոյ, Մ. Խորենացին ասում է՝ «բայց սքանչելի իմն ասէ պատմագիրն, թէ ի յուրմ տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր, սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնոյն Հայկայ»։

Բայց, ինչպէս և հարկ էր սպասելու, աւանդութիւնը, յենով պատմական միակ յիշատակութիւնների և աշխարհագրական աւանդների վրայ, ստեղծում է իւր ազգաբա-

նութիւնը և անցից յաղորդութիւնը, չփոխելով ժամանակները կամ բաժանելով մի ժամանակի եղելութիւնները զանազան ժամանակամիջոցներէ: Այսպէս մենք տեսնուք, որ Արմաւրի շինութիւնը վերագրուում է ոչ թէ Արագածին (Արգիշտիի), որ նոյն է թէ Արմենակ, այլ նորա որդու Արմայիսին, որ իւր անունը հաղորդեց քաղաքին: Եւս իւր տեղում նկատեցի, որ Արմայիս անունը յառաջացած է, հաւանաբար, Արմաւրից, և ոչ թէ ընդհակառակն: Բացի դորանից այս Արմայիսի մասին Մ. Խորենացին ասում է հետեւեալը, « զորդին իւր զՇարայ, զյուզվածին և զշատակեր, առաքէ ամենայն աղիւ իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բարի, յորում գնան ջուրը ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն և զգուտուն ասեն անուանել Շիրակ »: Շիրակ անուան տակ այս տեղ չը պէտք է հասկանալ համայն Բարձր Հայքը, կարուց գաւառի հետ, այլ յատկապէս հովիտն Արագածի հիւսիսային լանջերում, այսինքն արդի Ալեքսանդրապոլի դաշտավայրը: Մենք արդէն գիտենք Ղուկիմանի արձանագրութիւնից, որ զննեցինք այս զլիւտում, որպէս և Գանդըճայի արձանագրութիւնից, որ պիտի զննենք հետեւեալ գլխում, որ Արագածի հիւսիս—արեւմտեան լանջերը, յատկապէս Գարան—կու գետի հովիտը և Ալեքսանդրապոլի բոլոր ցած վայրերը նուաճեց Արգիշտի: Աւանդութիւնը նոցա նուաճումն վերագրում է Հայոց յետին ժամանակի Շիրակ գաւառի էպոսիմ—գիւցազնին. բայց ուշադրութեան արժանայ այն է, որ Արագածի հարաւային լանջերի նուաճումն աւանդութիւնը անվիջապէս կապում է հիւսիսային լանջերի նուաճման և Արմաւրի (Argistihinili) շինութեան հետ: Մենք տեսանք, որ իւրօր այսպէս էլ կատարուեցաւ. հարաւի նուաճումն առիթ տուաւ և հիւսիսի տիրապետութեան, և տեղի ունեցաւ մի և նոյն ժամանակ:

Ձարմանայի չէ բնաւ, որ ամենամութ և աղօտ յիշատակը ազգային աւանդութեան մէջ պահպանուել է այն մարդու անձնատրութեան և զործերի մասին, որին ամենից առաջ պատկանում է Երեւանի տափարակի գլուխը պա-

տիւր, այն է Մենուային, որի յիշատակարանները մենք զանազան Գաղապուստում, Արարատի հարաւային լանջերի մօտ, Մենք ասացինք, որ նորա տիրապետութիւնը սահմանափակուեցաւ միայն Երասխի աջ ափերով. իսկ բոլոր հովտի նուաճումն նորա երեւելի որդու՝ Արգիշտիի զործն էր: Շատ հասկանալի է, որ Արգիշտիի ու նորա աշխարհակալութեանց յիշատակը, որոնց մասին մինչև ցայսօր այնքան պերճաբանութեամբ խօսում են նորա անունը կրող յիշատակարանները, նսեմացրեց նորա հօր յիշատակը և Երասխի ձախ ափերի տիրապետութիւնը, յատկապէս Արարատի հարաւային և հարաւարեւմտեան լանջերի, ուր մնացել են Մենուայի յիշատակարանները, աւանդութիւնը վերագրում է Արմենակի—Արագածի (= Արգիշտիի) յետագայ սերունդ Ամասիային, որդուն Արմայիսի: « Ամասիայ, ասում է Մ. Խորենացին, անցանէ զգետովն մերձ ի լեռան հարաւայ, և շինէ անդ առ խորշուք լեռնաւորին մեծամեծ ծախիւք երկուս տունա. զմէն յառեւելս կայս մօտ յաղունս աղբերոցն՝ որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւսն՝ յառեւմուտս կայս նորին ասան, բացաղոյն իւր մեծօր հասարակօրոյ միոյ հեռակազմացի առնն ճանապարհի »: Յետոյ նա ասում է, թէ տներից մէկն իւր Յոյակ որդու անուամբ կոչեց—Յոյակերտ, իսկ միւսն փառոսի որդու անուամբ—Փառախոտ: Անկասկած, այս աւանդութեան մէջ փառախոտի և Յոյակերտի շինութեան մասին Արարատի ստորոտում, թագնուած է պատմական հատիկը Մենուայի (Մանուաղ) աշխարհակալութիւնների, նորա շինած տաճարների և պալատների մասին այս տեղեկութիւնը արձանագրութիւններով հանդերձ, որ կրում են նորա անունը: Բայց աւանդութիւնը հակառակ հեռեկողութեամբ է ներկայացնում աշխարհակալութիւնների ընթացքը. իւրօր աշխարհակալները ոչ թէ ձախ ափից անցան աջը, այլ ընդհակառակն՝ աջից դէպ ի ձախ, և ձախ ափերի տիրապետութիւնը կամ լաւ ևս ասել Արարատի նախալեռներին՝ տեղի ունեցաւ Երասխի բոլոր հովտի նուաճումից և Արմաւրի շինութիւնից առաջ:

Վերջապէս մեկնելու համար այն իրողութե-

թիւնը, թէ ո՞ր աստիճանին Հայոց աւանդութիւնը, Երեւանի տափարակի տիրապետութեան մասին Հայաստանի նահապետների ձեռքով, զիտար կէական կէտերում համաձայն է Ուրարտեան օշխարակալութեան (Ըզար նախ քան զՔրիստոս) ճշգրիտ ընթացքի հետ, մենք կարող էինք ներածել Մ. Խոսրոսացւոյ յետագայ աւանդութիւնը Փեղամայ ծովի և յորա եղբրքի տիրապետութեան մասին. բայց զորա վրայ պատշաճ ենք համարում խօսելու փորը ինչ յետոյ, երբ կանցնենք Փեօի—շայի յիշատակարաններին. իսկ առ այժմ այսքանս կը նկատենք, որ Մովսիսի Խորենացւոյ առաջին Գրքի ծՖ գլուխը շատ փոքր տարածութեան վրայ ներկայացնում է մեզ զարմանալի հանգամանքներ, որ յայտնի են մեզ այս երկրի ճշգրիտ պատմութիւնից հնազոյն ժամանակներում, Ը զարում նախ քան Քրիստոս. և առ հասարակ Հայոց աւանդական աշխարհակալութիւնների պատկերը միանգամայն քաղուած է Ուրարտեան աշխարհակալութիւնների ճշմարիտ պատմութիւնից՝ անձանց և վայրերի անունների նմանաձայնութեամբ հանդերձ։ Ես տարակոյտ չունիմ, որ այս զլիս համար անհրաժեշտ մեկնութիւններ կարելի է քաղել մի միայն բեռնակիր արձանագրութիւնների տեղեկութիւններից։ Ղուլիճանի [N<sup>o</sup>. VII] արձանագրութիւնը .

« Խալդիւուն ես աղօթում էի, տիրոջ հօրին, որ տուա իւրկիսին երկիրն ընծայ Արդիտիին, ես ընծաներով մտածեայ խալդիւուն։ Արդիտի աւտում է, ես նուանցի քաղաքն Գուրուբանի—երկիրն Կուլիսիին » և

Խ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

Շարչարեյի



## ՀԱՅԿԱԿԱՆ Ք

(տես յէջ 169)

### Ե

Յայտնի է թէ բացառականը մեր հին լեզուին մէջ կը հիմնուի տրականին վրայ, կարելի է ըսել՝ կը կազմուի տրականէն. — քաղաքաց՝ ի քաղաքաց, այլու՝ յայլու, և այլն։

Արդ՝ ունենալով բացառական ի միոյն, կը սպասուի նաև միոյն տրականի մը՝ կազմուած ոչ մասնիկով, որ՝ ինչպէս յայտնի է՝ կը մանէ հին հայերէնի հոլովական կազմութեան մէջ ոչ կամ ջ ձևով, և կը ծառայէ շինելու բառի մը երբեմն սեռականը, երբեմն տրականը և երբեմն ալ այս երկուքը միասին։ Այսպէս՝ կնոջ, գեղջ, սեռական և տրական. եկեղեցոյ՝ տրական (որմէ ներքոյական յեկեղեցոյ), և միոյն՝ սեռական։

Միոյն իբրեւ տրական չէ նշանակուած\* . առկայն մեր մատենագրութեան հնագոյն գործերուն մէջ կը գտնեմ մէկ—երկու հատուածներ՝ ուր միոյն իբրեւ տրական գործածուած է .

1. « Դէպ եղև քահանայի միոյն իշանել ընդ նոյն ճանապարհ » . (Ղուկ. Ժ. 34)։

2. « Երևեցաւ և ինձ իբրև անաբոյի միոյն » . (Ա. Կոր. ԺԵ. 8)։

3. « Խոտարամբար միմեռել էր ի տուարածափակի միոյն » . (Ազաթ)։

\* Նշանաւոր հայկաբան հ. Արտէն Բազըրաւունչ « Ի պէտս զարգացելոց » յօրինած քերականութեան մէջ նշանակուած է անցողակի միոյն տրականն, որոյ օրինակ բերուած են, « Խօսեցայ զձեզ առն միոյն », « Մանկան միոյն փութու սաստել », « Մի միոյն զգաւնել խորհուրդս », և. այլն. (տես Հայ. քերական. ի պետս զարգացելոց, Վենետիկ, 1832. էջ 42, համար 93)։

Խ. Խ.  
\* Այն վկայութիւնը մենք տարբեր կերպով կ'ընթերցենք մեր առաջին Ազաթանգեղոսի մէջ. « Ի զտարափակ քաղաքորմի միոյն խոտահամար միմեռել էր » . (Վէն. 1862. Գ. էջ 46)։